3 նոյեմբերի 2011 թվականի  N 1554 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 327-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն
----------------------------------------------------------------------------------------------------------

Հայաստանի Հանրապետության կառավարությունը   ո ր ո շ ու մ    է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի ցանկը հաստատելու և ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին» N 327-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման 3-րդ կետը.

2) որոշման N 2 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սահմանվում են օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման հետևյալ ընդհանուր չափաքանակները (քվոտաները)՝

| Խումբը | Տարեթիվը | Ներմուծման առավելագույն չափաքանակը (տոննա/տարի) |
|---|---|---|
| I- V, VII, VIII | 2011թ-ից սկսած | 0 |
| VI | 2011-2013 թթ.<br>2013-2014 թթ.<br>2015-2020 թթ. | անսահմանափակ<br>137.429<br>123.686 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: